ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

21 հոկտ. Փայաջուկ.

I

Մեր «Ընթերցանութեան գործը Ատրպատականում» յօդուածում արած կոչը չը մնաց «ձայն բարբառոյ յանապատի»... Այդ կոչին պատասխանեցին մի քանի տեղերից: Մոսկուայից պ. բժ. Ս. Շահ-Նազարեանը իր հեղինակութիւններից *) եւ հրատարակութիւններից ուղարկեց Ատրպատականի գրադարանների օգտին 100 օրինակից աւելի գրքեր, Բագուից՝ պ. Կ. Ղազարբէգեանից ստացայ 30 կտոր ընդհանուր ընթերցանութեան գրքեր, եւ Շուշուց՝ պ. Երուանդ Ղազարբէգեանից՝ 32 կտոր: Այդ գրքերը բաժանուել են բոլոր գրադարաններին:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

II

Բալախանի, 19 նոյեմբ.

«Վաստակ» ընկերութեան նաւթահանքի ծառայողները յայտնելով իրանց ցաւակցութիւնը վարչութեան անդամ եւ գործերի կառավարիչ Ներսէս Դաւթեանի մահուան առթիւ՝ խոնարհաբար խնդրում են Ձեզ ընդունել 37 րուբլի, որ հաւաքել են նաւթահանքի ծառայողները՝ ցանկանալով արտայայտել իրանց ջերմ զգացմունքը այն մարդու դագաղի առաջ, որը հինգ-վեց տարի շարունակ եղել է նրանց համար մի բարի հայր բառիս ընդարձակ նշանակութեամբ: Գումարի զործադրութիւնը թողնում ենք Ձեր կատարեալ հայեցողութեան:

ԲԱՂԴԱՆ ԵԱՐԵԱՆՑ

ՊԱՏԱՄԽԱՆՆԵՐ

ՍԱԼՄԱՍՏ—ՓԱՅԱՋՈՒԿ, Ե. Ֆ.—«Բաֆֆի» գրադարանը նկատի կ'ունենանք նուէրների դէպքում:

ՍՊԱՀԱՆ, Ս. Ց.—Զրոյցը չի տպուելու:

ԷՆԶԷԼԻ, Հայոց դպր. հոգաբ.—Մինչ Էնզէլիի ամբողջ հայ գաղութը չի կարող հոգալ մի բաժանորդագին: Զրի անկարող ենք ուղարկել. նկատի կ'ունենանք, երբ նուիրատուներ գտնուին:

ԲԱԳՈՒ, Ալ. Աբ.—Ստացանք Ձեր նամակը. կ'աշխատենք իրագործել Ձեր ցանկութիւնը:

---

*) Ի՞նչ առանձին օգուտ այդ հեղինակութիւններից (կանոններ, ծրագիրներ եայլն) Ատրպատականի գիւղական գրադարաններին... Нá тебѣ, Боже, что намъ не гоже!...

Ե. Խ.